

կայատկանի: Պարտկազան սեպածե արձանագրութիւնների մէջ Աբ-հ-բ-է-ն (Հպիգ. 184) սարի անունը կպատահի, որի մէջ առաջին բաժանիկը, ըստ ենթադրութեան, սար պիտի նշանակէ: Այս ենթադրութիւնն ևս ընդունենք Աբ-հ-բ-է-ն (Ալագեազ) Աբ-բ-է-ն սարերի և Աբ-բ-է-ն լեռնային երկրի անուններն աչքի առաջ ունենալով: Բայց այդ պէպքում ևս, այսինքն եթէ Աբ-հ-բ-է-ն անունը (Արա-միւնի բառից) տուած են Իրանական ազգերը, չէ կարելի եզրակացնել թէ այս բառի գործածութիւնը պարտաւորական լինէր Յոյների մէջ, որոնք իւրեանց զիջքի համեմատ Հայերի հետ պիտի յարաբերութիւններ ունենային: Պարսիկներից անկախ, ուստի որ և իցէ անուն տալու էին նոցա առանց սպասելու, որ Պարսիկներն իւրեանց լեզուի մէջ Հայաստանի բնակիչների համար վայելուչ անուն հնարէին:

Այլև քանի մի ազգերի և նոցա գլխաւոր աստուածների անունների նըմանութենից կծագի դարձեալ մի ենթադրութիւն, որը մի կողմից կարող է պարզել, իսկ միւս կողմից աւելի խառնել մեզ հետաքրքրող հարցը: Յայտնի է, որ Ասորեստանցիների և Ասոր աստուծու, Քաղզէացիների և Քաղզէ աստուծու (Վանի մէջ) անունների մէջ կկարծվի թէ ծննդարանական կապ կայ: Նոյնպիսի մի աստուած Հայերի անունի համար յառաջ կգայ Աբ-հ-բ-է-ն, որին, մի սեպածե դիցարանական աղիւսակի վկայութեան համաձայն, կաշառէին Սուգիանայի մէջ: Տես Rawlison, Herodotus, 1862, IV, հր. 205:

(Աբ-հ-բ-է-ն)

Ս. Տ. Գ.

ԳԱՂՏՆԻ ՎԿԱՅ:

— Այս կինը բոլորովին սովից մեռնումէ, և այդ փողերը կարող էին նորան փրկել:

Այսպիսի խօսքեր ասվեցան իմ և իմ բարեկամ միտէր Զօն Իրվի-նի խօսակցութեան ժամանակ:

Սեպտեմբերի մի գեղեցիկ առաւօտ մենք երկուքս նստած էինք մեր բնդհանուր բարեկամ Նօրտվիկ — Բալզամի կառավարիչ յարգոյամեծար Հէնրի Տիգօնի պարտեզի մէջ հովարանում: Բերկշէրի կոմսութեան մէջ:

Մեր խօսակցութեան նիւթը Հարդինգ անունով հարուստ վաճառականի դարչելի արարքն էր, որը թողած էր վաճառականութիւնը և որն իւր հարեան այրի կնոջ պարտական էր 100 ֆունտ ստէրլինգ, որովհետեւ կնոջ այրը Հարդինգի մօտ աշխատելով մեռած էր առանց իւր վարձը ստանալու: Հարդինգը հերքումէր նորա իրաւունքը և միշտ մերժումէր փող տալ նորան:

— Սակայն ևս այդ կարգադրեցի — ասաց բարեկամս բարեսիրտ ժպիտով: — Հարդինգը կերպով իմն իմ ձեռիս է: Սորանից քանի մի տարի առաջ նորա առոււտուրի մէջ շատ անմաքուր գործեր խառն էին, բոլոր այն գործերը, որոնք վերաբերվումէն այս խնդրին, կատարվեցան իմ պաշտօնական գոր-

ծունէութեանս ժամանակ. և ոչ միայն ես, այլև ինքն ևս լաւ գիտէ որ իւր բոլոր գործերը յայտնի են ինձ, և միշտ վախի մէջ է, որ չլինի թէ երբ և իցէ այդ բոլորը դուրս հանեմ: Ահա դորա համար է որ նա միշտ իմ կամքը կատարումէ, և նոյն իսկ երեկ դորա համար խօսակցութեան մէջ ես ուղղակի յայտնեցի նորան—այդ վայրկեանին հարկաւոր եղած տղաւորութիւնը գործելու համար շատ ահարկու ձև ստացայ— յայտնեցի, որ ինձ շատ անհաճոյ կ'ընդունայ, եթէ որ նա խեղճ կնոջ իրաւունքը չճանաչելով, փողը չվճարէ: Նա յանկարծ դեղնեց և յետոյ ինձ յայտնեց որ եթէ ինձ պէս մի պատուական անձի կարծիքը այդպէս է, պատրաստ է անյապաղ փոխել իւր միտքը և ճանաչել իւր պարտքը, բայց միայն խնդրեց որ կնոջ հետ խօսելու և բոլոր գործք վերջացնելու աշխատանքը իմ վերայ առնեմ:

— Զեզ յայտնի է— շարունակեց միստէր Երվինը— ես որքան անկեղծօրէն համակրումէի այս խեղճ մարդիկներին, և դուք կհասկանաք, թէ ինչպիսի սէրով յանձն առայ այս գործերը: Այսօր իսկ գործը վերջացած կլինի: Խօսք եմ տուել, որ այսօր ժամը երեքին միստէր Հարդինգի մօտ լինիմ և փողերը ստանալով այրու ձեռը յանձնեմ, որ նորա անակնկալ ուրախութեամբ զուարճանամ:

— Առաւել լաւ գործ գեռ ևս դուք արած չունիք, ասացի ես— բայց ի՞նչ կերպով էք կամենում նորա մօտ գնալ:

— Ոտով կերթամ, այստեղից 2 մղոնից աւելի չէ, կարծեմ ամենակարճ ճանապարհը Հօրֆիլդ— Կօպսի դաշտովն է անցնում:

— Այո, այդ ճանապարհը բաւական կարճ է, բայց չէք կամենում արդեօք ուղեկից ունենալ:

— Իհարկէ շատ ցանկալի էր, — ասաց նա — սակայն ինձ թուումէ թէ կողմնակի մարդի այս գործի մէջ մանկը անվայել կլինի թէ Հարդինգի և թէ այրի բարեկամահօւս վերաբերմամբ, որը ամենահպարտ և ամենազիւրազրդիտ կանանցից է:

Այս կարծիքի արդարութիւնը հասկանալով և մտաբերելով, որ ես պիտի նամականք գրեմ, վերկացայ, և ողջունեցի բարեկամիս, որը գեռ ևս պարտէզումն էր մնում: Հովարանից բաժանվելով, արագութեամբ ծովեցայ, որ շուտով տունս հասնեմ, յանկարծ հովարանի թուփերի տակից մի մարդ դուրս գալով ուղղակի ինձ մօտեցաւ:

Սա վարձկան մշակ էր, և քանի մի անգամ ինձ արդէն պատահած էր, բայց երբէք չեմ ախորժել. նորա արտաքին ձևը շատ օտարոտի և անհաճոյ էր: Նա ընկերասէր չէր երևում, նայումէր ճակատի տակից և ինձ տեսնելիս միշտ մի կողմն էր դառնում. նորա աչքերը շատ խորն էին ընկած, փոքրիկ քիթը վեր բարձրացած, ներքին ծնօտը առաջ ընկած էր վայրենի գաղանի նման, իսկ ատամը ժանիքի նման դուրս ցցված, մօրուքն ևս մի մեծ արտաքին տարբերութիւն ունէր. մօրուքը, ինչպէս և զիսի մազերը, այնպիսի կարմիր գոյն ունէին, ինչպէս շատ քիչ կարելի է տեսնել: Հագուստը բաղկացած էր սպիտակ կտաւեայ շապիկից կամ բլուզից:

ինչպէս որ հաղնումեն հիւաներ, ներկարարներ և ուրիշ հասարակ մշակներ:

Ահա այսպիսի էր այն մարդը, որը յանկարծ ճանապարհս կտրեց, երբ ես դարձայ հովարանի ետևը, բայց միևնոյն վայրկեանին նոյն անսպասելի արագութեամբ անյայտացաւ ինչպէս որ երևեցաւ և գնաց դէպի բաժնարանոցը:

Իմ թանկագին Իրվինին դեռ ևս իւր բարենպաստակ գործին շնչացած, մի անգամ ևս տեսայ, նա ամենաուրախ տրամադրութեան մէջ էր, և այս դէպքում նա զարդարված էր իւր զարդարուն զգեստով և փռշուց պահպանվելու համար ամառվայ վերարկուն ձգած էր վերայից, և գլխին դրած էր պայծառ գլխարկ: Ինձ այնպէս էր թուում, որ իւր կոճակի վերայ ծաղիկ ևս կար:

Միտէր Իրվինի զարդերի թուում նոյնպէս մի գերօրինակ բան կար, այն է նորա գաւազանի ծայրում թիթեռնիկ որսալու ցանցիկ կար: Նա շատ էր սիրում միջատաբանութեամբ պարապել, և մի անգամ չէր պատահում, որ դրօսանքից վերադառնալիս, հետք իւր սիրելի ժողովածուները շատացնելու պաշար չըրերէր: Ես դեռ կատակ ևս արի իւր փաստաբանութեան նորաձեւութեան մասին, նորան հաւատացնելով, որ միտէր Հարդինգը կկարծէ թէ այն ցանցիկը բերած է նա այրու փողերը մէջը դնելու:

— Ի՞նչ անեմ պատասխանեց ծերունին, — կարեօրութիւնը պահանջումէ, որ միշտ իմ հետ վերցնեմ այս ցանցիկը, ապա թէ ոչ, կարծես զիտմամբ պատահումէ, որ ցանցիկը հետս չէ լինում, իսկ ճանապարհին անշուշտ չեղած տեսակներ են պատահում, ուստի ստիպվումեմ մօտից սրտաբեկ անցնել:

Բայց դուք աներկբայ եղիք, որ ես իմ թուլութիւնը միտէր Հարդինգին ցոյց տալու միտք չունիմ: Իմ ցանցիկը կթողնեմ մի որևիցէ թուփի տակ, իսկ մեր տեսութիւնը վերջանալուց յետոյ կրկին վեր կառնեմ:

— Հատ լաւ, ցանկանումեմ ձեզ կրկնակի յաջողութիւն — ձեր բարի գործին յաջող վերջ և լի ցանցիկով թիթեռնիկներ:

Բարեհոգի ծերունին ի պատասխան ինձ ողջունեց և ժպտեց, և ցանցիկը շարժելով սկսեց իւր բարի գործին դնալ:

Ես ևս չեմ իմանում թէ ինչ նանրութիւն բնկաւ այս առաւօտն իմ վերայ: Ոչ մի գործ չէի կարողանում սկսել այդ առաւօտը: Մինչև անգամ չէի կարողանում տեղումն հանգիստ նստել: Գնումեմ պարտեղ, բայց շուտ տուն եմ վերադառնում: անցնումեմ սենեակից սենեակ, նայումեմ պատկերներին, և առանց մի որևիցէ նպատակի կամ ցանկութեան սկսումեմ մի որևիցէ գործ, բայց միմիայն պատճառը այն է, որ չեմ կարողանում հանգստանալ:

Տան վերին մասում դանդաղեմք մի աշտարակ և այդ աշտարակի մէջ ևս մի սենեակ կար, ուր սովորաբար ծխումէին, և որը զիտանոցի տեղ էր լինում: Իմ բարեհոգի տանուտէրը, երբ օղը խաղաղ էր լինում, սիրու-
մէր երկնային մարմինները հետադիտակով դիտել:

Անհանգստութենիցս դիտանոցը միտս ընկաւ. և ինձ թուումեր թէ իմ այժմեան տրամադրութեանս մի քիչ ծխախոտը անշուշտ կօղնէ՝ ուստի ես որոշեցի բարձրանալ աշտարակի սանդուխի վերայով և դիտանոցում հանգիստ ձեռն վայելել:

Սենեակը շափազանց գեղեցիկ էր. շուրջը ահագին պատուհաններ և անասահման տեսարաններ: Բազմատեսակ զիրքեր ըլլարներով և հովիտներով, առուակներով, անտառներով և մարգագետիններով:

Զէր կարելի ասել, որ այստեղ կենքի նշաններ լինէին, որովհետեւ այս կողմերի բնակութիւնը շատ ցանցառ է: Սակայն այս այն կողմերում երևումէին ազարակներ, և մինչև անգամ հեռուն երևումէին զիւղեր: Աս վտակի ծխախոտս և սկսեցի իմ առաջ բացված պատկերը դիտել:

Այս հանգստութեան միջոցին զանգակատան ժամացոյցը երեք խփեց: Աս մտարբերեցի, որ Հարդինդի մօտ տեսութիւնը այս ժամին էր նշանակված, և իմ մտքերը տեղափոխվեցան դէպի խեղճ այրի կինը և դէպի իմ բարի բարեկամը, որը մեծ ուրախութեամբ այսօրան աշխատութիւնները և հոգսերը յանձն առաւ գործը կատարելու առանց ամենայն շահասիրական նպատակի: Սակայն իմ մտածողութիւնս երկար չկանգնեց այս մտքի վերայ: Պատահամբ աչքս սենեակի անկիւնում դրված հեռագիտակի վերայ ընկաւ: Անասելի շփոթութեամբ, ոչ մի գործով պարապելու տրամադրութիւն չունենալով, ես մտածեցի հեռագիտակը դուրս հանել, և մի փոքր տեղի կենդանագրական դիրքով զուարճանալ:

Իմ նպատակին յարմար աւելի լաւ եղանակ չէր կարելի ընտրել, պայծառ արեգակ և տրեւեյեան քամի — սոցա միացումը գերօրինակ պարզութիւն և մաքրութիւն է առաջացնում մթնոլորտի մէջ, Բարեպատեհ հանգամանքից օգուտ քաղելով, հեռագիտակը մօտեցրի բացված պատուհանի առաջ և նստեցի մօտը դիտողութիւններ անելու:

Իմ բարեկամի հեռագիտակը շատ լաւ էր, թէպէտեւ ես վաղուց գիտէի այդ և արդէն քանի մի անգամ փորձեր արած էի, սակայն այս անգամ նորա ոյժը և արժանաւորութիւնը ապշեցրին: Աս սկսեցի զանազան փորձեր անել, և նորա ոյժի տարածութիւնը իմանալու համար, ուղղեցի դէպի գիւղական զանգակատունը, երկու մղոն տարածութեամբ աշխատելով, դիտել թէ ի՞նչ են անում մարդիկ այդքան հեռաւորութեամբ — մի խօսքով, ամեն տեսակ հնարներով հեռագիտակի ոյժն էի փորձում: Ես ամենաբաւարար հետեւներին հասնելով, սկսեցի աւելի նոր փորձեր, ուղղումէի նորան զանազան կողմեր, ամեն մի պատուհանի առաջ էի դնում և զուարճանումէի վայելչագեղ, բազմատեսակ պատկերներով, որոնք մին միւսից յետոյ իմ աչքի առաջ փոխվումէին կախարդական շրջանակի մէջ:

Հեռագիտակի տակ ընկնող առաջին պատկերը փոքրիկ ծիրանագոյն հըրապարակ էր, որի վերայով նոր էր անցել արօրը: Այս հերկված դաշտը մի կողմից շրջապատված էր փոքրիկ թուփերով, փոքր հեռու երևումէր պայծառ կանաչ դաշտը, իսկ առաջին կարգում երկու առողջ ձիեր ծանր

քարշումէին արօրը — մինը մոխրագոյն, իսկ միւսը սկեպոյն, նոցա կառավարումէր մի ծերունի կապոյտ փողապատով, որի ծայրերը շարժվումէին քամուց, իսկ կողքից գնումէր մի մանուկ, որը իւրաքանչիւր ակօսի մօտից դարձնումէր ձիերին և առհասարակ դիտումէր, որ ճանապարհից չշեղվին:

Ես ապակին շրջեցի և իմ առաջ ներկայացաւ մի նոր պատկեր. ճանապարհ, որի ծայրում կար օղէտուն, նորա վերին պատուհանների վարագոյրները սպիտակ շղարշեայ (լաշաք) էին — սա հիւրանոցն է, Իսկ ստորին հարկի պատուհանները կարմիր վարագոյրներով էին — սա ևս օղէտունն է, ուր կիրականաճաններին ժողովումէ ուրախ հասարակութիւնը, Իջևանի դրանը կախված էր նշանակ, Վարմիր զգեստով մինը կանգնած է, գլխին մի բան դրած, բայց չկարողացայ որոշել, գուցէ եռանկիւնակ (գլխարկ) էր, Իհարկէ այժմ ես մտաբերեցի, որ երբ միանգամ զբօսնումէի շրջակայքում, ևս տեսայ նոյն իսկ այդ հիւրատունը, նոյն իսկ նա «Մարկիզ Գրամբին» էր, Տան առաջ կանգնած է մի մեծ սայլ, Գրան առաջ կառապանը ջրումէ ձիերին, իսկ ինքը գարեջուր է խմում: Ես այս բոլորը շատ պարզ էի տեսնում:

Արկին շրջեցի, ինձ ներկայացաւ կարծես կախարդութեամբ լինէր, մի փոքրիկ երկաթուղու կայարան, Այստեղ շատ հեռաքրքիր բան չկայ. սպիտակ արքունական տուն երկաթէ տանիքով, պատի մօտ դրված են մի քանի կապոյցներ և քուրձեր, որոնք սպասումեն իւրեանց հերթին:

Ահա և մի մեծ ագարակ, հարթով ծածկված մեծ տուն, որտեղ բնակումէ տանուտէրը իւր բնտանիքով, տունը լաւ համարաւնոցով և բնտանեկան շինուածներով է, ահա և անասնանոցը, ձիերը և կովերը մինչև ծնկները խոտի մէջ են, խոզերը տղմում թաւալումեն, հաւերը և աքաղաղները փորփորումեն գետինը, Այս պատկերը նոյնպէս հաճոյ թուեցաւ ինչպէս և նորա սահմանակից հարուստ կալուածատէրի շրջափակված տունը, որի վերայ թէպէտ հոյակապութիւն և շքեղութիւն չէր երևում, սակայն բոլոր տնային յարմարութիւններ ունէր, Պարեզը այնքան մեծ էր, որ կարելի էր փոքր անտառիկ կարծել. մէջ տեղը բարձրանումէր լայն, սակայն ոչ բարձր, կարմիր քարից շինված տունը կանաչ տանիքով: Իսկ առաջը ձգված էր գեղեցիկ և կարգաւորված ծաղկանոց, տանիքում ևս լուսանցոյց կար: Իսկ մնացած միւս պատուհանները սպիտակ վերջաւորութեամբ պատին հաւասար էին, ինչպէս շինումէին անցեալ դարերում:

Երկար այս պատկերով զուարճանումէի, յետոյ դիտակը ակամայ դարձրի դէպի առաւել անմարդաբնակ վայրեր, Այս կախարդական շրջանում ոչինչ չէր երևում բացի ծառերից և մարգագետիններից և մի քանի կովերից, որոնք ծառերի ստուերներում ծուլութեամբ խոտ էին ծամում, իսկ միւս կողմերում թռչոտումէին ագռաւների սեաւ խմբեր առանց վախենալու ոչ մանուկների ձայներից և ոչ ևս խրտուիլակներից, Բայց ահա հասայ կանաչ անտառին, ուր կայտառ պօնին (իրանդական ձի) է

արածվում։ — Ե՛հ ի՞նչ որոնելի տեսարան է։ Անտառի մի անկյունում երևումէ փոքրիկ լճակ, շուրջը կտրատված ուռիներով։ Ես տեսնումեմ ինչպէս նորա հանգարտ մակերևոյթի վերայ անդրադառնումեն ծառերը և մինչև անգամ նոցա տերևների մէջից երևումէ կապոյտ երկինքը։ Ի՛նչ պարզութիւն և յարմարութիւն կայ այստեղ։ Այստեղ կցւումէ փոքրիկ անտառ, դրան առաջին մի դէզ խոտ կայ, բայց սա ի՞նչ է։ Դորա մարդիկ են—երկու հոգի— Ե՛հ ի՞նչ պարզ եմ տեսնում նոցա։ Բայց ի՞նչ են անում։ Ի՛նչպէս սաստիկ շարժվումեն։ Այդ ի՞նչ է նոքա կոռումեն արդեօք թէ մենամարտում։ Այո, նոքա կոռումեն, և նոցանից մինը—կարմիր գլխարկով— յաղթումէ միւսին։ Ահա նա իւր հա-
կառակորդի կոկորդից բռնեց, որը առաւել լծոյլ է պաշտպանվում։ Ի՛նչ սաստկութեամբ խփումէ փայտով նորա գլխին, որը բռնած է ձեռին, և բոլոր դժով աշխատումէ նորան ցած գլորել։ Յաղթողը մի կարմիր բաճ ևս ունի, արդեօք մօրուք չէ։ Ա՛հ, ահա և գլորեց նորան, սակայն դեռ ևս չէ թողնում նորան—դեռ ևս հարուածները ընկածի գլխին հասնումեն, իսկ նորա գլուխը բոլորովին սպիտակ է։ Ի՛նչ զարհուրելի պատկեր է։ Ես հեռացայ հեռագիտակից և աչքերս ձեռներովս փակեցի այս սարսափելի տեսարանը չտեսնելու։ Բայց մի վայրկեանից յետոյ ես դարձեալ նայումէի։ Ուրիշ դեռ ևս շարունակվումէր, կարծես վերջը մօտենումէ։ Ծերունին շարունակումէ իւր ընդդիմութիւնը, բայց քանի գնումէ թուլանումէ։ Ես պարզ տեսնումեմ, որ կոխը շուտ կվերջանայ։ Խեղճ ծերունին յուսահատական ճիգ է անում, կրկին ոտի է կանգնում, բայց խորտակիչ հարուած է ընդունում կրկին և յանկարծ ընկնումէ։ Եւ այլ ևս ոտի չէ կանգնում։ Տէր Աստուած, Այս ի՞նչ է նշանակում։ Սորա ի՞նչ մարդիկ են։ Արդեօք նոցա չեմ ճանաչում։ Չլինի թէ գետնին տարածվողը իմ բարի, ծեր բարեկամն է, իսկ նորա հակառակորդը այն կարմիրագլուխն է, որին դեռ ևս նոր հովարանի մօտ հանդիպեցայ։ Բայց անկարելի է, որ այս գործը, որին ես ականատես եղայ, սպանութիւն լինի։

— Առ վայրկեան ինձ թուումէր թէ բոլորովին զգացողութենից զորկված, շնչասպառ եղայ։ Ի՞նչ պէտքէ անեմ։ Ահա մի հարց, որը պատում էր իմ գլխումս, երբ ես լուռ, անընդունակ զգացմամբ, անշարժ նայումէի դիտակի մէջ, ոչ մի փոքր հանգամանք աչքիցս չթողնելու համար։ Հարկաւոր է որ ես տեսնեմ բոլորը, ինչ որ այստեղ կպատահի։ Ես բոլոր ուշքս ժողովցի դիտելու և ինչ անելիքս վճռելու։ Այն տեղը ուր այս յանցանքը կատարվեցաւ, ինձանից շատ հեռի էր, ուղիղ գծով $\frac{1}{4}$ մղոն, իսկ ճանապարհով, որքան ինձ յայտնի է, մի մղոնից աւելի է—հետեւաբար այնքան հեռու է, որ այնտեղ ժամանակին հասնելը անկարելի է։ Մինչև որ այնտեղ հասնեի, գործը կվերջանար, բայց ես բոլորովին համոզված էի, որ գործը արդէն վերջացած էր։ Հետեւաբար օգտակար լինելու համար, ինձ մի միջոց էր մնում, յանցաւորի դէմ ապացոյցները ճիշդ դիտել։ Ես պարտաւոր եմ իմ տեղը մնալով, յանցաւորի ամեն մի շարժումն դիտել։

և որքան հեռացոյցը թոյլ է տալիս նկատել մարդասպանի արտաքին ձևը և հագուստը: Գիտակի առաջ անզգայ և անօգնական նստած էի, բայց աչքերս հեռուն էին թափանցում: Այն մեծ շարժումից և կռուից յետոյ, խաղաղութիւնը տիրեց: Հարուածները դադարեցան. արդէն սպանութիւնը կատարվեցաւ և այլ ևս հարուածի կարեւորութիւն չկար: Ինքն սպանողը անշարժ կանգնած էր, և ես կարող էի նորա կերպարանքը դիտել: Ահա նորա կարմիր մազերը և մօրուքը, ահա և նորա կարմիր գլխարկը և կտաւէ շորը ահագին կարկատանով: Այժմ կասկած չկայ: Պարօշ է կասկած լինել թէ ով է նորա ոտի մօտ պառկողը: Սպիտակ մազերը, պայծառ վերարկուն, որոնց դեռ ևս մի փոքր առաջ տեսայ: Արդէն ոյժս գնացել էր համարեա այս տեսարանին նայելուց: Բայց յանկարծ ինձ օգնութիւն հասաւ վրէժխնդրութեան ծարաւը, որը իմ կիրքը գրգռեց: Իմ աչքերը մըթնեցնող մշուշը ես զօրով ցրուելով և աւելի ուժգնութիւն գործ դնելով, տեսայ որ մարդասպանը վեր առաւ իւր կարմիր գլխարկը, իբրեւ թէ հասկանալով, որ ժամանակը ի զուր կորցնել չէ կարելի, սկսեց մի բան պրտուելու ձևով իւր զօճի դիակը շօշափել: Որքան որ կարողացայ նշմարել, նա սպանվածի գրպանը դարձրեց, և ինձ թուումէր, թէ նորա ձեռում ոսկի էր փայլում, դուցէ սա երեւակայութեանս ցնորքն էր: Աերջապէս նա ամենայն կողմ շարժեց դիակը և երբ, ըստ երեւոյթին, իւր ազահոլթիւնը յագեցրեց, վերցրեց մարմինը և տարաւ մերձաւոր անտառը, ուր իմ աչքից անյայտացաւ: Ահա վերջին վայրկեանը մօտեցաւ, բայց որեւիցէ հնար գործ դնելը դժուար էր: Արդեօք նա բոլորովին ծածկվեցաւ: Արդեօք անտառի միւս ծայրից կերթար և ես այլ ևս չեմ տեսնի նորան:

Շնչառութիւնս բռնվեցաւ: Գեռ ևս շարունակումէի նայել ծանր շնչառութեամբ: Բայց երբ վերջապէս համբերութիւնս հասաւ և յուսահատումէի, ահա մի բան կրկին սկսեց շարժվել: Ծառերի տերեւները բացվեցան և միևնոյն տեղում, որտեղից իմ խեղճ բարեկամի դիակը տարաւ, երևեցաւ կրկին մարդասպանը, բայց նա արդէն միայնակ էր: Մի քանի վայրկեան անշարժ կանգնելուց յետոյ, անտառից դուրս գալով ետեւը նայեց, և իւր այնտեղ ինչպէս մտածը չյայտնելու համար սկսեց ծիւղերը ուղղել: Այս գործը վերջացնելով, դարձեալ կանգնեց և սկսեց իւր շուրջը նայել. կարծես թէ մի բան էր որոնում, չգիտենալով որ անտեսանելի և աննշմարելի դիտակը նորա իւրաքանչիւր քայլը դիտումէ, նա ուղղակի անցաւ դէպի դաշտի անկիւնը, ուր գտնվումէր կտրատված եղևիններով շրջապատված լճակը: Այստեղ նա կանգնելով մի բան վերցրեց: Ի՞նչ պիտի լինի արդեօք այդ: Պանաչ գոյնով մի բան է: Ո՞չ ապաքէն այս թիթեռնիկների ցանցիկն է: Ես ճշդութեամբ չկարողացայ իմանալ, բայց զորա մասին կասկած չունէի, նոյնպէս կասկած չունէի և նորա մասին, թէ խեղճ ծերունին մերձաւոր ճանապարհից շեղվել էր նոր տեսակների ետեւից ընկնելով:

Վարմիր գլխարկով մարդը իւր վերցրած իրը ջուրը ձգեց: Յետոյ իւր

վերայի հագուստը (ըլուզը) հանելով սկսեց լուսնալ, երևի շորի վերայ արիւնի նշաններ կային, Գորանից յետոյ լուաց երեսը և դեռ ևս թաց շորը կրկին հագաւ, բայց կրկին կանգնեց և սկսեց իւր շուրջը ղիտել, Ի հարկէ այս բոլորը ժամանակ էր պահանջում, բայց ես չէի համարձակում աչքս ղիտակից վերցնելու, Չեռս մեկնեցի զանդակին, բայց չհասաւ, ես վախենումէի տեղիցս շարժելուց, Սակայն առանց ժամանակ կորցնելու հարկաւոր էր մի բան անել:

Նա մէջքը դէպի լճակը դարձրած սկսեց առաջ դնալ և շուրջը նայել, արդեօք եղեռնագործութեան որեւիցէ նշանը չէ՞ մնացել, յետոյ դաշտի մէջից անցնելով հասաւ այն դրանը, որը խոտի դէզի մօտ էր, առ վայրկեան նա անյայտացաւ, յետոյ կրկին երեւեցաւ, և այսպէս շարունակվեցաւ քանի մի վայրկեան, մինչև որ մեծ ճանապարհին հասաւ, որտեղից և ուղղվեցաւ դէպի «Մարկիզ դը Գրամբի» պանդոկը, ուր և մտաւ:

Այստեղ զգացի, որ պէտքեր մի վճռողական հնար գործ դնել, եթէ որ այժմ չյաջողիմ նորան բռնել, մինչդեռ հասարակական տանն է, և եթէ որ նա ժամանակին այդտեղից հեռանայ, կարող է մի որ և իցէ ինձ անտեսանելի ճանապարհով անյայտանալ, և այն ժամանակ նորան գտնելը դժուար կլինի, նա կարող է ազատվել:

2էի համարձակում աչքս ղիտակից վերցնել և ղիտակը—պանդոկից, Անհրաժեշտ էր որ առանց իմ տեսնելու չերթար, շարժել անգամ չէի համարձակում, բայց մի բան հարկաւոր էր որոշել, և որ մին իմ տեղ պէտքէ գործէր, Մի վայրկեանի մէջ ինչ անելիքս վճռեցի, Տեղումս անշարժ մնալով, բոլոր ոյժերս ժողովեցի և սկսեցի այնպիսի ձայներ արձակել, որ տան բնակիչները, իմ կարծիքով, պիտի ղիտանոց վազէին, կարծելով թէ ինձ մորթումեն, Սակայն այդ չպատահեց, և շնայելով իմ բարձր աղաղակներին, լսող չեղաւ, Աերջապէս ձայնս լսվեցաւ, Ծաղկանոցում պարտիզպանի գլուխը երևեցաւ, իմ աղաղակները հասան նորա ականջին, բայց ինձ լսելով չէր իմանում թէ ձայնը որտեղից էր գալիս:

— Ո՞վ է աղաղակում—հարցրեց նա բարձր ձայնով:

— Այդ ես եմ ... աշտարակում ... օգնեցէք... առանց վայրկեան կորցնելու:

Շուտով ես լսեցի սանդուխի վերայ ցանկալի ոտի ձայնը, դեռ ևս դուռը չբացված և պարտիզպանը ներս չմտած, ես նորան հրամաններ արի, — Թամբիր պօնին — գոչեցի առանց աչքս հեռաղիտակից վերցնելու — և ամենայն արագութեամբ շտապիր «Մարկիզ դը Գրամբի» հիւրանոցը, նոր այնտեղ սպանութիւն կատարվեցաւ և եղեռնագործը դեռ ևս այնտեղ է, Նա հագած է կարմիր գլխարկ, և մազերը և մօրուքը նոյնպէս կարմիր են, շորը կտաւից է, և կտրծքի վերայ մութ կարկատան ունի:

— Այդ ի՞նչ կարելի բան է, իմ օգնականը, — բացադանչեց պարտիզպանը:

— Նոյն ինքն նա է, բանտարկեցէք նորան, երբ ձեր գալու միջոցին նա երթալու լինի, աղաղակ բարձրացրէք և նորա յետևից գնացէք, Նա մեր խեղճ

միստեր Իրվինին սպանեց, Խօսակցութեամբ ժամանակ մի կորցնէք, շուտ շուտով այնտեղ գնացէք, Ես այստեղից վերկենալ չեմ համարձակում, Գնացէք, և ուսմոր ճանապարհին պատահիր ուղարկեցէք այստեղ:

Նոյն վայրկեանին հեռացաւ նա, և ես անմիջապէս լսեցի տնից հեռացող ձիու ոտի ձայներ, Սորանից յետոյ գրեթէ ամբողջ ընտանիք, պարտիզպանի խօսքերից վախեցած, սկսեցին դէպի դիտանոց վազել և հաւաքվեցան իմ շուրջը, որ նստած էի դեռ ևս հեռադիտակի առաջ, Լուռ էին, բայց զգումէի, որ ամենքի աչքերը ինձ էին դարձած:

— Ի՞նչ է նորա անունը, — հարցրի ես:

— Մաէսօն — պատասխանեցին — Ուիլիամ Մաէսօն է, Ես դարձեալ աչքերս հեռադիտակից չէի դարձնում:

— Ի սէր Աստուծու, պարոն, ասացէք, սա ի՞նչ է նշանակում:

— Դուռը բացվեցաւ, պատասխանեցի ես:

— Նա գնաց:

Մի քանի ժամանակ անցաւ, բայց ոչ դք էր երևում, Բայց ահա դք մի՞ն գալիս է. . . . Ոչ, այդ նա չէ, այլ մի պառաւ կին է, որը իւր ձեռին մի սանձ ունի բռնած:

Այսպիսի կեղծ վրդովմունք քանի մի անգամ պատահեցան:

— Ահա նա ևս, ասացի ես, ետևս խառնաշփոթ խօսակցութեան ձայներ լսելով — ահա նա դուրս եկաւ և դէպի ճանապարհն է նայում. . . .

Այժմ նա կհեռանայ, իսկ պարտիզպանը դեռ ևս չէ հասել:

Բայց դեռ ևս տեսնումէի նորա ինչ ուղղութեամբ գնալը:

— Զիպպաններից դք մին կայ այստեղ — ասացի ես առանց յետ նայելու:

— Կայ — պատասխանեց ինձ մի ծանօթ ձայն:

— Գնա, մի ձի թամբիր, ամենաշուտ վազող ձի:

Զիպպանի սանդուխից վազելը լսելի էր ինձ:

— Դեռ ևս տեսնումէք նորան, հարցրեց ծառան:

— Մինչև այժմ տեսնումեմ, բայց շուտով կանայտանայ, նա մօտենումէ մի ճանապարհին, որտեղ ես չեմ տեսնի:

Եւ գուշակութիւնս շուտով կատարվեցաւ, տները և բլուրները մեր մէջ մնալով նա իմ աչքից ծածկվեցաւ, նա երկար չէր երևում, բայց յանկարծ երևեցաւ երկաթուղու կայարանի ուղղութեամբ:

Իսկ ես մտածութեան մէջ ընկայ, թէ արդեօք ի՞նչ պիտի անէի, և մի անորոշ համոզումն ինձ ակամայ մտածել էր տալիս թէ այդ կայարանը, ուր ուղղվումէր եղեռնադործը, նորա վերջին սահմանը պիտի լինի, և նորան կտրանաւորելու համար մի յոյս էր միայն մնում, այն է դիտել նորա ամեն մի շարժումները մինչև որ կայարան կհասնի: Բայց իմ աչքերը, առաւելապէս ձախը, որին ես աւելի զօրումէի, այն աստիճանին յոգնած էին, որ ես դժուարութեամբ էի նայում: Պէտքէր մինը իմ տեղը նստեր, սակայն այս դժուար էր:

Այդ վայրկեանին իմ մօտ զտնվումէին միմիայն կանայք և մի մանուկ:

Ի հարկէ մանուկին հաւատալ չէր կարելի, իսկ կանայք միմեանց տեղը նստելով, միեւնոյն բանն էին ասում: Հեռուն երևումէին մի քանի սեաւ բծեր: Յանկարծ նոցանից մինը յիշեց որ տեղակալի կառավարիչ պ. Մարտինը այժմ դուցէ տանը լինի, նոյն վայրկեանին ծառան գնաց նորան կանչելու: Մարտինը նստաւ իմ տեղը և շատ պարզ էր տեսնում:

Նա այնտեղերն է բնակում, ուր աչքից կորցրիք նորան, ասաց Մարտինը:

Եւ Մարտինը յայտնեց իւր կարծիքը թէ կարելի է նա տուն գնացած լինի, հետեւաբար շատ յարմար է նորան այնտեղ կալանաւորել. ուստի հարկաւոր է ուղղակի այնտեղ մարդ ուղարկել: Սակայն ես տարակուսում էի նորա փաստերի մասին:

— Դուք բոլոր ուշք կայարանի վերայ դարձրէք, ասացի նորան, իսկ մընացածը տեսնենք ինչ կլինի. նա անշուշտ դէպի կայարան կուղղվի:

Մարտինը լռութեամբ դիտումէր կայարանի տունը:

— Ահա մի պառաւ կին, որը սանձը ձեռին ուղղվումէ դէպի երկաթուղու կայարանը, — ասաց Մարտինը, — Ահա մի քանի մարդիկ ևս ժողովվումեն այնտեղ:

— Ի՞նչ մարդիկ են դոքա:

— Ո՛հ, այդ նա է: Ահա մի մանուկ, որը երևի շտապումէ նամակ ստանալու: Իսկ այս ջրաղացպանը տոպրակը ուսին ալիւր է տանում: Խառնակվումեն:

Ահա և բեռնակիրները մի բան են անում: Այժմ քանի՞ ժամ է, յանկարծ հարցրեց նա:

— Զորսից քսան վայրկեան անց է— պատասխանեցի ես:

— Իսկ շոգեկառքը գնումէ չորսից քսան ինն վայրկեան անցած: Ուրեմն դորա համար է խառնակութիւնը:

— Շոգեկառքը ո՛ւր է գնում:

— Բրիստօլ — պատասխանեց նա:

Ես ևս այդպէս էի կարծում, որ եղեռնագործը այդտեղ կգնայ:

Ահա բեռնակիրները մի ծերունուց վերցնումեն և կայարան են տանում մի կապոց:

Գնալու ժամը մօտենումէ. ես ծուխը արդէն ատենումէ: Ինքն վէստերուկը դուրս է գալիս կառքից, իսկ նորա ետեւից դուրս են գալիս երկու մատաղահաս օրիորդներ: Իսկ ահաւասիկ մի կին մանուկը ձեռին: Ահա երկու օրիորդներն ևս լաւ ժամանակին հասան, որովհետեւ ղոները փակվումեն: Այն միւսը ինչպէս վազումէ: Դա մեր զօրաբաժնից կամաւոր ղինւոր է: Նա ուշացաւ, բայց ոչ, պահապանը տեսաւ նորան, և ձեռներով նշաններ է անում նորան: Տեսնումես ինչպէս արագ վազումէ նա, իսկ պահապանը ներս ձգեց նորան և դուռը փակեց:

— Ուրիշ ոչ ոք չկայ, անհամբեր հարցրի ես:

— Ոչ ոք, ահա երկաթուղին սկսեց գնալ:

— Դուք հաւատացած էք որ ոչ որին աչքից չթողրիք:

— Բոլորովին հաւատացած եմ:

Ես հայիւններումս մոլորվեցայ, և չէի իմանում ինչ անեմ: Այժմ կայարանը դիտել անօգուտ էր, որովհետեւ մինչև դիշերվան ժամի Տը ոչինչ գնացք չէր լինում: Բացի նորան տանը կալանաւորելուց, ուրիշ հնար չկար: Ուստի վճռեցի այնտեղ գնալ, յուսալով որ եթէ և նորան այնտեղ չգտնեմ, գուցէ տեղեկութիւններ կստանամ, որոնք իհարկէ անօգուտ չեն լինի: Իսկոյն Մարտինից խնդրեցի ինձ պատմել նորա տան ուր լինելը և ինչ դիւրք ունենալու: յետոյ նորան միայնակ թողնելով արագութեամբ ցած իջայ, և առաջուց պատրաստված ձիու վերայ նստելով սրընթաց գնացի ցոյց տուած ուղղութեամբ:

Իմ արագընթաց ձին շուտով հասցրեց ինձ այն տների մօտ, ուր ճանաչեցի ինձ առաջուց նկարագրված եղևնագործի բնակարանը: Զիուցս իջնելով, ձիս կապեցի տախտակէ պատնէշից և մօտեցայ դրանը, կամեցայ գուռը բանալ, բայց փակ էր: Բարցրացրի զլուխս, պատուհանից ևս նայել չկարողացայ. պատուհանները փակված էին և փեղկերն ևս զրված էին: Փոքրիկ տունը անբնակ էր երևում, և ես համոզվեցայ, որ նորանում մարդ չկար. սակայն ես բոլոր ոյժովս սկսեցի դուռը ծեծել, կարծես կամենումէի նորան ջարդել:

Իմ հանած ձայները և աղաղակները անհանգստացրին վերջապէս նորա հարեաններին, երկու, երեք հօգի մօտեցան ինձ:

— Այս Ուիլիամ Մաէսօնի տունը չէ՞, հարցրի մի ծերունուց, որը ամենից խելացի էր թուում:

— Այո, պարոն, բայց նա այժմ այստեղ չէ, նա գնաց, պատասխանեց ծերունին մի փոքր մտածելուց յետոյ:

— Ո՞ւր գնաց, վաղ՞ուց է գնացածը:

— Է՛հ — ասաց ծերունին երկար մտածելուց յետոյ — կէս ժամ կլինի:

— Ո՞ր ճանապարհով գնաց:

Ծերունին առաջմանից աւելի մտածութեան մէջ ընկաւ, նորա դանդաղութիւնը ինձ կատաղեցնումէր. նա շուրջը նայելուց յետոյ ինձ կայարանի կողմը ցոյց տուաւ, ես արդէն ձիուս վերայ էի և պիտի գնայի, երբ նոցանից մինը ասաց.

— Պարծեմ իւր կրթութիւնը անելու գնացած պիտի լինի:

— Կրթութիւն: Ի՞նչ կրթութիւն — հարցրի ես:

— Ի հարկէ յօժարակամ զինւորների հրաձգութեանը:

— Մի՞թէ նա զինւոր է, — բացագանչեցի ես:

— Այո, ահա մեր հօգեւոր հովիւը պատուէր է տալիս, որ ամենայն ոք իւր պարտքը կատարէ . . .

Ես այլ ևս նորան չէի լրում, այլ սկսեցի արագութեամբ դէպի կայարանը շտապել: Այժմ բոլորը հասկացայ. նոյն միջոցին, երբ ևս նորան կորցրի, նա մտած է իւր տունը, և կարծելով թէ շորի փոփոխութիւնը իւրեան

կազատէ, պատրաստ շոր ունենալով կամաւոր զինւոր է դարձել :

— Ո՞վ է արդեօք յիշում այն զինւորին, որ հազիւ հազ երկամուղու գնացքին հասաւ . . .

Սա էր իմ առաջին հարցը ինձ պատահող մարդին: Սա պահապանն էր, ոյր ինձ իսկոյն կայարանի զանձապահի մօտ տարաւ: Մի և նոյն հարցը առաջարկեցի նորան ևս և հաստատ պատասխան ստացայ: Նորա ուշադրութիւնը դարձած էր առանձնապէս այդ մարդի վերայ, որովհետեւ մեքենայի գնալուց առաջ վերջին վայրկեանին նշանաւոր գումար ներկայացնելով, մնացորդ էր պահանջում:

— Տոմսակը դէպի ո՞ր կողմ գնալու առաւ, — հարցրի ես:

— Բրիստօլ գնալու — պատասխանեց նա:

— Այն մարդը մարդասպան է և նորան հարկաւոր է բռնել, ասացի ես: Շուտով Բաթ հեռագրեցէք, Հեռագիրը աւելի շուտ կերթայ քան թէ երկամուղին, և նորան կարող են բռնել:

Ահա այս կերպով զարհուրելի դործը վերջացած էր: Մարդասպանին Բաթում բռնեցին, և խուզարկութենից յետոյ նորա մօտ գտան, բացի ծախսած գումարից 100 ֆունտ ստերլինգ: Ամեն կողմից ապացոյցները ակներե էին: Խեղճ միստէր Իրվինի զին գտան անտառում: Ճանապարհը ես ինքս ցոյց տուի: Յետոյ լճի ափը գնացի թիթեռնիկների ցանցիկը գտնելու: Գաւազանի մի ծայրը ջրից դուրս էր ցցվել, իսկ միւս ծայրը երկամէ օղակով լինելով ջրի մէջ էր ընկղմած:

Վկաների պակասութիւն չկար: Իմ նորա դէմ վկայութիւնը անվիճելի էր: Շատ փորձեր եղան իմ ասածս հերքելու և ապացուցանելու, որ իբրեւ թէ ես կարող էի սխալվել, և թէ անկարելի է որ հեռագրիտակով այնքան հեռուից այդքան մանրամասնաբար դիտէի: Շատ ապակէգործեր կանչվեցան և շատ փորձեր արին: Ապացոյցներից ակներե եղաւ, որ ես կարող էի ամենայն բան տեսնել, ինչ որ իմ ցուցմունքով յայտնած էի: Եւ թէպէտ սորանից շատ վէճեր դուրս եկան և շատ լրագիրներ իւրեանց ձոյներ բարձրացրին ապացուցանելով որ մի անգործ և դատարկաշրջիկ մարդի համար կարելի չէ մի անձն զո՞հ բերել, որը պարապութենից սկսումէ հեռագրիտակով զանազան կողմեր նայել: Սակայն դատաւորները ամբաստանված Աւիլիամ Մաէսօնին դատապարտեցին կախաղան հանելու:

Ընթերցողներին հաճելի կլինի ի հարկէ իմանալ, որ Խեղճ այրի կինը որը անմեղաբար այս զարհուրելի եղեռնագործութեան պատճառն էր եղած ստացաւ իւր 100 ֆունտ ստերլինգը թէպէտ ոչ Զէմս Իրվինի ձեռից:

(Թարգմ.)

Ճէմ. Գ. Դաս. աշ. Մ. Գ.

ԲԱԳՐԵՒԱՆԴՅԻ ՀԱՅԻ ՎԻՇՏ:

Ամեն օր նոր ցաւ, վիշտեր դառնագին

Տիրումեն Հայի սրտի խորքերին.